

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 բուլբուլ, կես տարվանը 6 բուլբուլ, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мелкъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագրերը. Տեղեկութիւններ գաւառից. Նամակ Երևանից. Նամակ Անիից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրերը. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրերը. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՎԵՐՋԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախընտանի գաւառից ստացած վերջին տեղեկութիւնը ցոյց է տալիս, որ պրինց Նապօլէօնը ճանապարհով է դէպի գիւղերը՝ տեղիւնդ ծանօթանալու ազգաբնակչութեան կրած վնասների հետ և պարզ գաղափար կազմելու իրերի իսկական վիճակի մասին:

Գիւղերի գրութիւնը ստակալի է. Հայերը, գտնվելով սպառնական վիճակի մէջ, իրապէս դադարել են իրանց հողի և գոյքի իսկական տէր լինելուց: Այդ պատճառով նրանք պրինց Նապօլէօնի այցելութիւնից մեծ սպասելիքներ ունեն: Նրանք ուզում են հաւատարմ, որ այդ այցելութիւնից յետոյ վախճան կը գրվի այն դժոխային վիճակին, որի մէջ հայերը գտնվում են մօտ 40 օր և վերջապէս միջոցներ ձեռք կանուկն զսպելու ասպատակութեան տխուր հերոսներին:

Մեր առաջ գրված են մի շարք հարցեր, մէկը միւսից աւելի ծանրակշիռ և կարևոր: Մենք մի քանի անգամ խօսեցինք գիւղերի անյետանգելի կարիքների մասին և ցոյց տուինք, որ այժմ երբ գիւղացու տարեկան հարստութիւնը գտնվում է նրա վարուցանքի մէջ և երբ մի քանի օրվայ և շաբաթվայ մէջ, նա կարող է ձեռքից գնալ և ոչնչանալ և շատ կարևոր է, որ գործ գրված լինեն բոլոր վարչական, զինուորական և հասարակական ոյժերը ազատելու գիւղացուն նրան սպանացող անտեսական քայքայումից:

Մենք շատ մեծ նշանակութիւն ենք տալիս այդ խնդրին և դարձեալ կը վերադառնանք նրան:

Մենք գիտաւորութիւն ունենք շօշափել Երևանեան նահանգին վերաբերեալ և մի ուրիշ հարց, որ ներկայումս խօսակցութեան առարկայ է առևտրական աշխատանք: Ինչպէս յայտնի է, Նախիջևանի գաւառում մասնակառուարային առևտրի մեծագոյն մասը կատարվում էր հայերի միջոցով: Հայերը կամ ուղիղ բանակցելով Մոսկվայի գործարանատէրերի հետ, կամ գործելով Թիֆլիսի և Երևանի վաճառականական տներին հետ, ամեն տարի մեծ քանակութեամբ ապրանք էին տանում Նախիջևանի գաւառը և նոյն իսկ փոխադրում մի մասն էլ Պարսկաստան: Այդ առևտուրը մեծ նշանակութիւն ունէր թէ հայերի և թէ ռուս գործարանատէրերի համար: Այժմ, երբ տեղի ունեցան Նախիջևանի և Շարուրի սարսափելի դէպքերը, ոչ միայն մեծ քանակութեամբ ապրանք փչացաւ և առևտրական տները քայքայվեցին, այլ և պարզվեց, որ առաջիկայ ամիսներին և տարվայ համար պէտք է բաւական մեծ քանակ լինի առևտրի համար, որովհետև դեռ վատահուրթիւն և ապահովութիւն չէ ձեռք բերված նորից վերականգնելու տապալված գործը:

Առևտրի ճգնաժամը, այդպիսով, վերաբերում է ոչ միայն Նախիջևանի հայ վաճառականներին, այլ և Երևանի, Թիֆլիսի առևտրականներին իսկ աւելի ևս մեծ չափով Մոսկվայի շրջանի գործարանատէրերին, որոնք կորուստներ ունեն թէ այս աղէտից, որ տեղի է ունեցել և թէ այն տխուր հետևանքներից, որ առաջացել է այդ աղէտից ապագայի համար:

Թէ հայ և թէ ռուս վաճառականներին ընդհանուր խորհրդակցութիւնը և միասին մշակած միջոցները պէտք է ձգտեն կարելիին չափ կարճ ժամանակում դարձան անել ցաւին և աշխատել ոտքի կանգնեցնել կազմակերպված գործը, որի աջողութեան համար շատ տարիներ են հարկաւոր եղել և մեծ աշխատանք ու եռանդ է պահանջվել:

(Հետադրում)

Նախիջևան, 17 յունիսի,
Երէկ հասաւ պրինց Նապօլէօն, եղաւ հայոց եկեղեցում, բազարում. հարց ու փորձ արեց մանրամասնօրէն:

Այսօր պրինցը շրջեց մի քանի կողմաւրէն գիւղեր, այցելեց աւերված տները: Եւ և քննադատեց ներկայացնում էինք բացատրութիւններ:

Վաղը պրինցը շարունակելու է այցելել Զահուկը, Գեօրքին և ուրիշ գիւղերը:

Բնակիչների վերահաստատման համար պրինցը տալիս էր խորհուրդներ բնակիչներին ներկայութեամբ, հրամայում էր զինուորներին գնդակահարել յանցաւորներին, խոստանում էր ներթափան օժանդակութիւն:

14-ին պրինցը եղել է Շարուրում և Դարբասկազում, ուր այժմ տիրում է հանգստութիւն:

Մերայ վարդապետ

Երևան, 17 յունիս օրվայ 7 ժամին:
Յունիսի 16-ին, առաւօտեան, Ուլուխայուրի կայարանում թուրքերը, մեծ ամբոխով, յանկարծ յարձակվեցին մարդա-ապրանքատար գնացքի երրորդ կարգի երեք վագոնների վրա, խուզարկեցին շատ հայերի, սպանալով մահ, խեցիկատրճանակներ, գաշայներ, փող և իրեր մօտաւորապէս 1000 բուլբուլ, մէկին ծեծեցին, ոյժով երկուսի կօշիկները հանեցին: Յունիսի 15-ին թուրքերը փորձեցին ոյժով խուզարկել հայերին, բայց այդ փորձին դիմադրեց Սէլիմբէկ Բուստամբէկօվը:

«Մշակի» երեկվայ համարում տպված ընդարձակ քննադատականը Թաւրիզում տեղի ունեցած դէպքերի մասին, այսօրվայ համարում տպված պարսից արտաքին գործերի մինիստրին, նրա Թաւրիզի օգնականին և Թէրջանի հայոց հոգաբարձութեան հեռագրերն են պարզ ցոյց են տալիս, որ Բագուում մի խումբ չարամիտ մարդիկ իրանց կեանքի նպատակ են շինել սուտ և շինծու լուրեր հնարելով, յուզում են և խռովութիւն սերմանել ու արինհնդութիւն առաջ բերել երկու ազգերի—հայերի և թուրքերի մէջ: Սուտ, շինծու հեռագրական լուրերով խռովում են պարսից կենտրոնական կառավարութեան միտքը, որպէս զի գրգռեն նրան հայերի դէմ և Պարսկաստանում ու այդտեղ ևս հայերի կոտորած և խռովութիւններ առաջացնեն:

Բարեբախտաբար, պարսից կառավարութիւնը, շատ էլ հաւատ չընծայելով այդ լուրերին, զիմել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին և տեղեկացրել այդ հեռագրերի մասին: Թէ և մենք չունենք մեր ձեռքի տակ Վեհափառ Կաթողիկոսի պատասխանը, բայց հաստատապէս գիտենք, որ Վեհափառը իր հիւսադիրներով հանգստացրել է պարսից կառավարութիւնը և խնդրել հաւատ չընծայել խռովարարների սուտ, հնարովի լուրերին, որոնք նոյն իսկ իրանց անունը տարակրթելու քաղութիւնը չունեն, հաւատացնելով, որ հայ ժողովուրդը երբեք և ոչ մի տեղ ոչ նպատակ է ունեցել, ոչ ևս ունի յարձակվելու թուրքերի վրա, նախապարձակ լինելու: Վերջապէս Թաւ-

րիզի իշխանութիւնները ու կրօնապետները իրանք ևս չուտով համոզվեցին, որ ստացված հեռագրերն սուտ են եղել և նպատակ են ունեցել միայն Պարսկաստան ևս դարձնելու թատերավայր այն խժոժութիւնների և գազանութիւնների, որոնք ահա մի քանի ամիս է խռովել են Անդրկովկասի խաղաղութիւնը և կանգնեցրել նրա խաղաղ կեանքի հոսանքը:

Երբ պէտք է անհետանան այդպիսի եղանակները խռովարարները, որոնք կանգնեն առնում ոչ մի միջոցի առաջ: Հարկաւոր է ամենախիստ, եռանդուն միջոցներ երևան հանելու այդ չարագործներին, մերկացնելու նրանց նենգամիտ արարքները և մատնելու նրանց արդարադատութեան պատժին ու բոլոր մարդկանց նախատինքին:

Առաջ ենք բերում վերել յիշված հեռագրերը:

Պարսից մինիստրի հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին:
«Բագուից եկած հեռագրերից երեւում է, որ այդ քաղաքի հայերը մոտեցանում են չար նպատակներ իրանց քաղաքակցի մոտուլմանների վերաբերութեամբ. գէնք են ժողովում վատթար ծրագրեր իրագործելու համար: Հարկ չը կայ ինձ ասելու ձերք սրբութեան, թէ ինչ ազդեցութիւն են թողնում այս համբաններ Պարսկաստանում և կարող են ունենալ վտանգաւոր հետևանքներ այստեղի հայերի համար, որոնք այստեղ միշտ վայելել են նորին մեծութեան շահնայի հայրական խնամքը և ամեն տեսակ ապահովութիւն: Գիտենալով ձերք սրբութեան բարեկամական զգացումները և մարդասիրական գաղափարները, ինչպէս ևս հաճէք քարոզել ձեր հաւատարմիցներին խաղաղութիւն և ներողամտութիւն, որ վայել է կողք կողքի ապրող հասարակութեան. իմ կողմից ես ուղարկել եմ Կովկասի բոլոր հիւպատոսներին համապատասխան հրամաններ քարոզել տալ մոտուլման հոգևորականութեան հաշտութիւն և խաղաղութիւն:
Մուշէր էք Իովի (arswafin qorobehi mshusar)

Թէրջանի հայ հոգաբարձութեան հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին:
«Բագուից պարսից արտաքին գործերի մինիստրութեան տեղեկութիւն է հասել թէ այնտեղի և Կովկասի այլ տեղերի հայերը զինուորվում են մոտուլմանների վրա յարձակվելու: Եթէ Կովկասի հայերը այդպիսի քայլ անեն, անտարակոյս Պարսկաստանի մոտուլմանները կը կոտորեն հայերին, որոնք, շնորհիւ պարսից կառավարութեան բարեխնամ ուշադրութեան, վայելում են կենսի և գոյքի կատարեալ ապահովութիւն. ուստի ի սէր պարսկահայերի գոյութեան խնդրում ենք Ձերք Վեհափառութիւնից գործ դնել հարկ եղած ազդեցութիւնը Բագուի և այլ տեղերի հայերի վրա, յետ կենալու այդ մտքից և հաշտելու հարևան մոտուլմաններին հետ, որպէս զի Պարսկաստանի հայութիւնը ազատ մնայ փորձանքից: Կովկասի պարսից հիւպատոսներին հրահանգ է սուտած հարկ եղած միջոցների դիմել երկու կողմերի մէջ հիմնաւոր հաշտութիւն կայացնելու: Հետևանքի մասին խնդրում ենք յայտնել ի միաժամութիւնի:

Թէրջանի հայ հոգաբարձութիւն

Թաւրիզից, Գարեգին Կաթողիկոսին:
Հայոց Վեհափառ Կաթողիկոսին:

«Երևանի մոտուլմանները հեռագրում են, իբր թէ նրանք փակել են խանութները և շրջապատված են: Խնդրում եմ անյապաղ միջոցներ ձեռք առնել երկու ազգերի խաղաղացման համար: Այստեղ

հանգստութիւն է, սպասում եմ պատասխան:

Ասրպասակաճի Գարեգին

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XXIII

Հարկաւոր է բժշկական օգնութիւն: Այսպէս է հեռագրում Մերայ վարդապետը Հին-Նախիջևանից:
Կարիքը մեծ է, վտանգը վերահաս: Նախիջևանի գաւառի հիւսիս-արեւելեան ծայրում, համարեա Զանգեզուրի գաւառի սահմանագծի վրա, գտնվում է Գեօրքին հայաբնակ գիւղը:

Այս անունը պէտք է յիշել, երբեք չը մոռանալ:

Ամբողջ երեսուն օր ու գիշեր նա պաշարված էր թուրք խուժանով: Երեսուն օր նա կտրված էր աշխարհից, ոչ մի տեղից օգնութիւն չէր ստանում: Եւ վաղելով իր սեփական միջոցներով, իր ունեցած ոյժերի վրա, դիմադրում էր:

Մենք ապրում ենք պատերազմական ժամանակում: Կարող ենք Հեռուր Արեւելի ահաւոր պատերազմի անցքերը, հետևաբար լաւ պիտի հասկանանք թէ ինչ պիտի նշանակէ երկար ժամանակ պաշարված դրութեան մէջ մնալ:

Եթէ լաւ կազմակերպված, զինված, պաշարման նախապատրաստութիւնները տեսած մի բերդի մէջ անխուսափելի է դառնում սովի և նրա հետ կապված վարակիչ հիւսիսայինների աւերիչ դրութիւնը, հասկանալի է թէ ինչ պիտի լինի յանկարծակիի եկած, անպատրաստ մի գիւղի դրութիւնը երեսուն օրվայ պաշարման դիմանալուց յետոյ:

Դրութիւնը սաստիկ բարեցնող մի հանգամանք կայ: Գեօրքին գիւղը մենակ չէր մաքառում: Նրա մէջ խմբված էին հարևան հայ գիւղերից փախածները, որոնց թիւը մօտաւորապէս 5000 հոգի են հաշւում:

Մի ամբողջ բանակ, ինչպէս տեսնում էք... Այժմ, երբ պաշարումը վերացել է, ինչ է հարկաւոր ամենից առաջ:

Բժշկական օգնութիւն: Որպէս զի հիւսիսայինները չը զարգանան, որպէս զի պաշարի պահպանութիւնից թուալացանքը կազդուրվեն, որպէս զի...

Շատ ու շատ կարևոր բաներ: Հարկաւոր են բժիշկներ: Թոյ շտապէն օգնութեան:

Լուր, չը լսելու դնել այլ ևս չէ կարելի: Պէտք է, վերջապէս, ամաչել ժողովրդից:
1877-ի պատերազմի ժամանակ Բայազետ բերդը աւելի կարճատև պաշարման էր ենթարկված, կարծեմ 26 օրվայ: Բերդապահ զօրքը դիմադրեց մինչև վերջին ժամը, երբ օգնութիւնը հասաւ: Ազատվածները զարդարվեցին հերոս անունով, փառաբանվեցին, պարծանք յայտարարվեցին:

Գեօրքին գիւղը 30 օր դիմացաւ թուրք խռովարարներին: Իրաւունք ունի որ ի պատիւ իր այդ հերոսութեան հայ հասարակութիւնը շտապէ ազատել նրան պաշարման հետևանքներից:

Չէ պահանջվում, որ դուք այդ գիւղացիներին հերոս հռչակեք, հեռուց կեղծ ոգևորութեամբ և աւելի կեղծ արտասուքներով փառաբանեք նրանց: Ոչ, դա աւելորդ է, ոչ որ կարօտ չէ այդպիսի ցոյցերի:

Ժողովուրդը իր պարտականութիւն է կատարել, դուք էլ, հայ բժիշկներ, հասկացեք, որ եթէ առ ժամանակ թողնէք ձեր յարմարութիւնները, պաշտօնները և դնաք հիւսիսային պարտաւորութիւն կատարած կը լինէք: Պէտք է շտապել: Եւ շտապողները միայն բժիշկները չը պիտի լինեն: Բժիշկները իւրանց գիտութիւնն ու փորձը կարող են մէջտեղ բերել: Բայց դա բաւական չէ: Հարկա-

և որ է կանոնաւոր կազմակերպութիւն, հարկաւոր է խնամք տանելու բոլոր միջոցները հայրենային: Այս էլ հասարակութեան պարտքն է:

Ահա մի լաւ ասպարէզ և բժիշկ-ուսանողները համար: Ո՛րք են նրանք: Ռուս ուսանողները սովի և համաճարակների միջոցին զրնուած են ժողովրդի մէջ, աշխատում են, նահառակվում են: Հայ ուսանողներ հիմա ձեր հերթն է:

Անցեալներում մի ռուս թղթակից մի մասնաւոր շրջանում կարգում էր զեկուցում Նախընտրական արդիւնքի մասին: Մեծ բազմութիւն էր հաւաքվել՝ զեկուցանողին լսելու: Բայց նրանց մէջ մի հատ ուսանող չէր երևում:

Այդ գիշերը նրանք, անշուշտ, սովորական յաճախորդներ էին «Բանկի այգում», «Բէլ-վի» շանտանում:

Միթէ պէտք է այստեղից սարսափի եզրակացութիւն հանել:

Դեռ սպասենք: Դեռ տեսնենք ինչ կանեն ուսանողները...

ռանց որ և է լուրջ միջոցաւ առաջացնելու: Դեռ նախահարկաւոր արդիւնք չունենալով 13-ին այստեղից մեկնել է Նախընտրական և Շարուրի կողմերը, ուր նորից բռնկել է թուրքական ֆանատիկոսութիւնը:

Դաւաճաններից հասնող լուրերը մէկը միւսից անմիջապէս ընդհարումների դէպքերն են նկարագրում: Եւ ինչպէս երևում է նրանք չեն դադարի և կը շարունակեն տեղի ունենալ, որ թուրք ազգաբնակչութիւնը մեծամասնութիւն է կազմում:

Մեզ հասել են մի շարք նոր դէպքերի նկարագրութիւններ: Երևանի և Շարուրի գաւառների սահմանակից գիւղերում տեղի ունեցած: Երևանի գաւառի չորրորդ մասում Շաղաթլու, Ղազուլու, Դաւնաղ, Ջղին, Երանոս և Դարա-խաչ գիւղերի թուրքերը խմբեր կազմելով, մայիսի 26-ին, յարձակվեցին Դարախաչի վրա և քննեցին 300 գլուխ ոչխար: Հայերը երբ դուրս եկան հաւարի գնալու, տեղացի թուրքերը համոզեցին հայերին կուր չը բռնվել, խոստանալով ոչխարը յետ բերել, բայց չը-րանք խաբարեցին, երկու օր անցնելուց յետոյ խառն տարված սուրուից շողեցին յետ բերել: Երբ թուրքերը ոչխարները, խաչ հայերին ոչ, հասկանալի է, որ կոմիտէի խաղացել են նոյն իսկ խոստացող համագործակցի թուրքեր:

Յունիսի 2-ին, նոյն խառնուրդներից կազմված հոսանքը յարձակվեց Բէշլիվէրան գիւղի վրա և քննեց 450 գլուխ ոչխարի սուրուն: Գիւղացիները հաւարի գնացին, բայց ապարդիւն, ոչխարը յետ բերել չը կարողացան:

Յունիսի 6-ին, դարձեալ նոյն թուրքերն, այս անգամ միացած նաև քրդերի հետ, յարձակվեցին Բերաւու գիւղի վրա և քննեցին նախընտրական 700 տաւար: Հաւարի հասան Զանգուլուի, Զանախլիի, Բէշլիվէրանի, Դաշխաչի հայերը, նրանց օգնութեան հասան նաև սարաժնիկներ և զբաղւում: Աւարառուները թողնելով նախընտրական, փախչում և ծածկվում են Շէյթանի դաւառի ձորի մէջ: Աճրեկ ու հեղեղը խառնուրդում են նրանց փախուստը, այդ ձորի մէջ և կռոււմ են, աւարառուներից սպանվում են 42 հոգի և 2-ը ձերբակալվում, որոնցից մէկը մօլլա է:

Շնորհիւ այսպիսի յանդուգն և բացարձակ կողմնակցությունների, հայ ժողովրդի կեանքը այդ կողմերում դարձել է միանշանակ անաւելի և անապահով: Սպասան, Հոգնաւոր, Միմօնի գիւղ և Սուրբար գիւղերի ժողովուրդը դատարկել է իր տուն ու տեղը և քաղվել է Դաւա-լու գիւղը առաջացնելով սոսկալի նեղուածք:

Անկի վատթար լուրեր հասել են Շարուրի գիւղերին, որոնց մասին վաղը կը գրենք: Գաղաթում կոմիտէական է, որ կազմվում են. Բագուից եկած 2 հայ և 2 թուրք պատգամաւորութիւնը գալով, այստեղի դէպքերից ճշգրիտ տեղեկութիւններ քաղելու և հաղորդելու Բագուի իրանիզեցիային, առաջարկել է երկու կողմերից ընտրել կոմիտէական իրանց մէջ առաջ եկած անկարգութիւնները պատժելու վաղը լինելու է այդ կոմիտէականի ընտրութիւնը:

Այս քաղեկի երկաթուղով եկողները պատմեցին, որ Ուլուխանլու կայարանում թուրք խուժանը մտաւ վազմաներ և սկսեց խուզարկութիւն ճամբորդների իրերի մէջ: Մի հայի իրերը, որը վեր էր բերված վազմանից, կողոպտեց: Ուլուխանլուն առաջին կայարանն է, որտեղից բաժանվում է Նախընտրական գիւղը: Ուլուխանլուն թուրքական մի անհանգիստ գիւղ է:

Ա-Դօ

ՆԱՄԱԿ ԱՆԻՒՑ

Յունիսի 16-ին

Կանոնաւոր կերպով առաջ կերթան պրօֆեսոր Մանի պեղումները: Շատ բան պարզուած է: Զուարթնոցի նմանութեամբ, Դագիլի շինած եկեղեցին ըլլալուն մասին ոչ մի կասկած չի մնաց: Կիսով չափ դուրս եկաւ արտաքին բոլորակ պատը ներքին և դուրսէն սկսեցաւ: Ինչու երբ կը կրեն քանդակաւոր դարձ կամարներ, բայց ոչ Զուարթնոցի նման նուր և խաղողի քանդակներով, այլ անցնող իրենց սերած ոճով, — մանուշակ քանդակներով զարդարուած են կամարները: Ներսի խաչածիլի մեծ սրէները և խոյակներով սկսեցին երկաթուղովին անարդար միացած. ընդհանուր գծերը այս խոյակներուն նոյնպէս բոլորովին նման են Զուարթնոցի խոյակներուն, միայն քանդակներու թիւն արարելութիւններ կան. երկու սառնէն աւելի կանգուն են, թէ դուրսի պատերը և թէ ներսի սրէները: Առ այժմ շատ բան մնացած կերկի և յուսալի է, որ գիւղութեամբ կարելի ըլլայ վերակազմել:

Պ. Մառ անհամբեր կը սպասէ արձանագրութիւնների դուրս գալուն, որ մինչև այսօր դեռ չեն երևացել, առհաս յուսալի է, որ դուրս գան կարևոր արձանագրութիւններ, քանի որ բաւական բարձր պատեր, թէ կանգուն կան և թէ պատերու խոշոր կտորներ պահպան են հողին վրա:

Պ. Մառ վերին աստիճանի ուրախ է և գոհ այս կողմերը գտնված հեթանոսական հնութիւններու մասին, զորս շատ մեծ գիւտ և նորութիւն կը համարի պատմութեան համար: Պարիսպէն դուրս թուրքի գիւղին մէջ, թուրքերը սկսեցին բանալ շատ մը գերեզմաններ, և մէջէն դուրս բերել են զանազան հեթանոսական առարկաներ. խեցեղէններ, ապարանջաններ, ոսկեղէն զարդերու բեկորներ: Պ. Մառ գնեց Անիի թանգարանի համար: Պ. Մառ բոլոր անհամար այցելեց այդ գերեզմաններու տեղը, և մտադիր է այս տարի յարմար առթիւ բանալ այդ գերեզմաններն ալ:

Ամսոյս 12-ին, կիրակի օրը, պ. Մառ, Անիի Կաթողիկէ մայր եկեղեցւոյ մէջ հոգեհանգիստ կատարելու առաւ հանգուցեալ Եղեա-նի յիշատակին: Ներկայ էին բաւական բազմութիւն գիւղացիներէն. շատ բարձրակարգ է, որ այս տարի տակաւին մինչև այսօր քաղա-ներէ եկող ոչ մի այցելուի երես չի տեսնու: Հոգեհանգստի արարողութիւնէն յետոյ պ. Մառ քանդակներ և զարդա դասը վարձարեցին զատ, կարևոր գումար մ ալ բաժնեց աղքատ-ներուն:

Գաղաթացի այցելուներու փոխարէն այս տարի ունինք տարբեր տեսակ այցելուներու մեծ բազմութիւն մը, շրջակայ բոլոր գիւղացիներէն ամեն աղքէ խառն: Ասոնք հիւանդ-ներ են, որ կուգան տիկին Մառին մօտ, որ կատարեալ անձնուրոյթեամբ կը հոգայ ա-նոնց ամեն բժշկական կարիքները. դեղ ու դարման կը բաժնէ անինսոյ. իսկ ինչ որ իր կարողութիւնէ վեր է, նախնական դարման-ներէն յետոյ խորհուրդ կուտայ բժիշկի դիմել: Բաւականին զոն մնացած են հիւանդները և այդ պատճառով ալ գրեթէ միայն են ամեն կողմէ շարան շարան գալ և վարկեան մը հանգիստ չեն տար տիկին Մառին: Իսկ նա անտրտուն կը տանի ամեն անհանգստու-թիւն:

Թ. Թորմանեան

ՆԱՄԱԿ ԽՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 16-ին
Կարդացի «Մշակ»-ի № 118-ում էնդլիթից յունիսի 4-ին գրած նամակը, որով պարտա-կանութիւն է դրվում ընտրուելի Հոգաբար-ձութեան վրա, իրանց սրբավայրի անունը և հեղինակութիւնը օտար երկրում բարձր պա-հել, և այդ նպատակով հրաւիրել են փոխա-րէն նոր ուսուցիչ, որ իր կոչման բարձրու-թեան վրա կանգնած լինի և այլ. և այսպիսի մի բանի նախադասութիւններ:

Եղբիկ ուսուցիչը ես եմ, և քանի որ այդ մութ անարկները ինձ են վերաբերում, պա-հանջում եմ անշուշտ Շաթլի. Արար պարոնից հրապարակ դուրս գալ իր անունով և պարզ ու փաստացի կերպով ապացուցանել:

1) Իմ կոչման բարձրութեան վրա կանգնած չը լինեմ: 2) Ինձ յանձնած սրբավայրի ա-նունը և հեղինակութիւնը բարձր չը պահեմ: 3) Հայ գաղութի ընտանիքներում որոշից ցա-նել և 4) Մանկավարժութեան ծանօթ չը լինեմ:

Սպասում եմ պատասխանի:

Ա. Դարբինեան

ՆԵՐՔԻՆ (ՈՒՐՈՐ)

«ՌԱԲԱՅԵ»-ում տպված է հետևեալ պաշտօ-նական հաղորդագրութիւնը. «ՀՈՅ. ՕԵ.» լրա-գրի № 129-ում յայտնված կարծիքի վերաբե-րութեամբ՝ Թիւրքիայից փախած հայերի օգ-տին հաւաքված գումարները Երևանի նահան-գի ֆուտբոլ, հաղորդում են, որ այդ ուղեւորները, մեծ մասն իրանց նպատակին ծառայեցնելուց յետոյ, մնացել են 28,200 ռուբլի, որը պա-վում է Թիֆլիսի գանձարանում 1904 թւին հրատարակված 3,6%-անոց պետական թղթ-թերթով, յանձնված կանգնաւորի Գովկասի փոխարքայի դիւանի գործից: Բացի դրա-նից, նոյն դիւանի տեղեկութիւնների հա-մաձայն, մի քանի նահանգապետների տը-րաւորութեան տակ կան նոյն նպատա-կի համար աննշան գումարներ, որոնց չա-փը դեռ պարզված չէ: Յիշված 28,200 ռուբ-լուց, գնեցեալ աշխատանք կուն Վորոնցով-Դաշկովի կարգադրութեամբ, 20,000 ռուբլին յունիսի 17-ին հեռագրով փոխադրված է Երե-ւանի նահանգապետին բաժանելու, ըստ իր բարեհայեցողութեան, իբր նպատակ բացառա-

պէս հայերին, Թիւրքիայից փախածներից, ո-րոնք այժմ Երևանի նահանգում տեղի ունե-ցած անկարգութիւններից ֆուտբոլ են»:

Էջմիածնից հեռագրում են, որ այսօր, յու-նիսի 18-ին, պէտք է կատարվի Նահապետ և Աշոտ վարդապետների եպիսկոպոս ձեռնադր-վելու արարողութիւնը:

Ի լրումն մեր երեկվայ հաղորդած լուրի Բա-րանասեանցի մահվան մասին, պէտք է կցնեք հետևեալը: Հանգուցեալը թողել է նօտարական կարգով կտակ, որից երևում է, որ նա նուր-բի է իր կարողութեան մի մասը բարեգոր-ծական նպատակով: Ա) մի տուն, որ գտնվում է Թիֆլիսի Վերլաժնեան փողոցի վրա, ութ-սուն հազար ռուբլու արժողութեամբ, Թիֆ-լիսի բ. արական գիմնազիային, այն նպատա-կով, որ նրա արդիւնքով ուսանեն հայ չքա-ւոր աշակերտներ: Բ) երեք տոմսակ առաջին փոխառութեան 50% նուբիւր է Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան, Գ) երկու տոմ-սակ 3-րդ փոխառութեան 50% Թիֆլիսի կեն-դանները հովանաւորութեան ընկերութեան, Դ) երկու տոմսակ 3-րդ փոխառութեան 50% Թիֆլիսի անչափահաս յանցաւորների ուղղիչ հաստատութեան, Ե) իր որդեգիր Պ. Մ. Ֆեհանցին 500 ռուբլի և Զ) իր որդեգիր Ս. Ս. Նրդնկեանցին, որ ուսանում է Սօրբոնում, մի հազար ռուբլի: Բացի այս իրաւունք է տուել իր կառակատարներին ծախելու մի տարվա ընթացքում իր բոլոր շարժական կարողու-թիւնը ու գոյացած գումարով շինել Բօնիսի հայոց ուխտատեղում սենեակներ ուխտաւոր-ների համար:

Մեզ խնդրում են յայտնել, որ կօշկակար Միլտից Պապիկեանի գործարանից այս տա-րի հաւաքված սովորական մատաղի փողը յատկացրվեց Նախընտրական ֆուտբոլի օգ-տին, ընդամենը 10 բ. 60 կ., որ և արվեց խմբագրութեան: Նուրբատուններ են Մ. Պապիկեանի 2 բ., Բ. Սողոմոնեանց 1 բ., Դ. Տէր-Ներսէսեան, Կ. Պապիկեանց, Գ. Սի-մօնեանց, Մ. Գեորգեանց, Ռ. Միսասեանց, Վ. Սողոմոնեանց, Յ. Յարութիւնեանց, Մ. Չէլ-թիկեանց, Ա. Դոխասեանց, Դ. Դազաշկի, Մի. Ռմ, Բ. Շօտաշկի, Ի. Դաբուլաճէ, Կ. Բագրաճէ 50 ալան կ. Յ. Գուրգենեանց, Յ. Դէլիաշկով, Մ. Մաշկալեանց 20-ալան կ., 1 ա. 60 կ.:

Կոյրերի խնամող հոգաբարձութեան կող-կանեան բաժնից հաղորդում է պ. պ. անդամ-ներին, որ կիրակի, յունիսի 19-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Թիֆլիսի I արական գիմնազիայի դահլիճում նշանակված է ընդհանուր ժողով, լսելու հոգաբարձութեան 1904 թւի հաշիւը և պաշտօնատար անձերի ընտրութիւն անելու:

Վերջին ժամանակներս Թիֆլիսի բերդա-պահ զօրքերի և քաղաքի ազգաբնակչութեան մէջ նկատվել է ստամոքսային և աղիքային սուր հիւանդութիւններ, որոնք, ինչպէս են-թաղրվում է, առաջացել են վատ կերակուր-ներից և հին մռից, որ մօրթում են առանձին անհատներ, առանց քաղաքային սպանդանոցի հետ գործ ունենալու:

Թիֆլիսի պրաւաւաւանի սեմինարիայի տե-սուչ նշանակված է Բուտիբիկի քահանայ, Թիֆլիսի հոգևոր դպրոցի տեսուչը, իսկ վեր-ջինի տեղը բռնում է նոյն դպրոցի ուսուցիչ Բալայիտ Գրեկովը:

Թիֆլիսի էլէքարաքաղի անօնիմ ընկերու-թիւնը յայտնել է իր համաձայնութիւնն ըն-դունելու ուղարակայի որոշած պայմանները էլէքարաքաղի գիծն անցկացնելու ապագայ Մուխրանեան կամուրջի և Յիցիանօվի դարձ վրայով, որպէս զի միացնէ Երևանեան հրա-պարակի գիծը Հաւաքար—Նախընտրական գիծ հետ:

«ՀՈՅ. ԱՅԱ» լրագրերը հաղորդում է, որ ծովային վարչութիւնը բոլորովին միմիկ է որ և է պատուէր տալ նաւ շինելու համար օտարերկրեան նաւաշինարաններին և անհրա-ժեշտ է ճանաչել այսուհետ բոլոր պատուէր-ները տալ Ռուսաստանի նաւաշինական գոր-ծարաններին:

Նախընտրական արդիւնքի օգտին ստա-ցանք 1) Գ. Տիտոսեանց (Բալայիտի) 4 ռուբլի, 2) Կ. Ռաֆայելեանց 5 ռուբլի, 3) Կ. Աղիեանց 3 ռուբլի:

Անդրեյ Բաբայանի հայ հասարակութիւնից հաւաքած 56 թ. (տես «Մշակ» № 118) Նախընտրական քննարկում հայ ընտանիքներին նուրբեր են հետեւեալ անձինքը. Մի 10 թ., Ա. Դաւիթեան 5 թ., Մ. Երեմեան 5 թ., Գ. Աթաբեկ 3 թ., Զ. Յակոբեան 3 թ., Գ. Փարսեան 3 թ., Կ. Արշակունի 2 թ., Եղբ. Հախնազարեան 2 թ., Մ. Զաւարեան 2 թ., Ա. Արշակունի 2 թ., Մ. Դանիէլեան 2 թ., Ա. Յովհաննիսեան 2 թ., Գ. Աւագեան 1 թ. 50 կ., Բ. Գառնաբեան 1 թ. 50 կ., Գ. Բաղդասարեան 1 թ., Ն. Աւետեան 1 թ., Պ. Ամիրեան, 1 թ., Ա. Չէչեան 1 թ., Խ. Եղեան 1 թ., Մ. Լազարեան 1 թ., Մ. Ոսկանեան 50 կ., Խ. Բալասան 1 թ. 50 կ.:

Յունիսի 15-ին, երեկոյեան 8 ժամին, երբ մի խումբ ռուս բանակային զինուորական էին ռուսաց միաբնակարան եկեղեցուց, ուր գնացել էին հայրենասիրական ցոյց անելու՝ իբր հաւատարմիմ հայտարարելու ու զուտ ռուս ազգայնեան, Նախապետական թաղում, հասնելով երկաթուղու գծին, մի անբնակ տեղ, մի անյայտ մարդ, օգտուելով ի վան Ռոյ բանակային միջնակութիւնից, ֆինանսական դանաշուով մի չափազանց ուժեղ հարուած է հասցնում այդ բանակային և տեղի ու տեղի սպանում: Դիակը տարված է Միքայէլեան հիւանդանոց, իսկ սպանողը անյայտացել է: Տեղական լրագրողները ասելով, նայն օրը կատարվել են և երկու ուրիշ սպանութեան դէպքեր նոյն հայրենասիրական ցոյցին մասնակցող բանակայիններից երկուսի դէմ, դրանցից մէկը է Նիկոլայ Սեչենովը, վառարան շինող, բանակայինների հայրենասիրական ընկերութեան պատգամաւորը: Սեչենովին սպանել են ատրճանակի մի հարուածով: Իսկ երրորդը փորձել են զինել և վազենիւրով ծառայող բանակային Իլյա Բորչովի դէմ, բայց փորձը չէ անողովել:

ՄՕՍԿԱՅԻՆ մեկ գրում են. «Հանգուցեալ Գ. Եղեանը, որի հանդիսաւոր թաղումը Մոսկվայում կայացաւ, ինչպէս հաստատ աղբիւրից յուրմ ենք, իր մահից յետոյ թողել է 200,000 թ. կարողութիւն: Հանգուցեալը ոչ մի կտակ չէ թողել, հետեւապէս նրա ամբողջ կարողութիւնը կանցնի իր հարազատ եղբոր և քրոջ որդիներին, որոնք թաղումը ներկայ էին: Եղեանը թողելից ամսի 6-ին իր ծնողներին մօտ, քրոջ կողքին: Ցանկալի է, որ այդ գուժարեց որոշ տոկոս յատկացվէր հայ բարեգործական հիմնարկութիւններից մէկին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԵՎ ԵՑՈՒՄԻՆՈՒՅԻՑ

Ժրնիվ, մայիսի 1-ին

«Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» ներկայ տարւոյ Համագումարը բացվեց Նիկոլայեւայի Բէքը բաղնիքում, ապրիլի 3-ին, «Արքի» հիւրանոցում ներկայութեամբ 58 հոգու՝ պատգամաւորներ, անդամներ և մի քանի հիւրեր:

Համագումարը պատգամաւորներ ունէր Գերմանիայից, Ֆրանսիայից, Բելգիայից և Նիկոլայեւայից: Աւստրիական, ինչպէս և Անգլիական հայ ուսանողները ներկայացուցին չունէին, գուցէ այն պատճառով, որ այդ երկրների մէջ, որպէս և Իտալիայում, մեր ուսանողները կազմում են վերին աստիճան անշահ թիւ, չը շողկապված «Միութեան» հետ: Ուսանողները հայ ուսանողները շատ կարեւոր թուով պաշտօնական ներկայացուցին չունէր, հաւանորեն արդէնք այն անսովոր փոթորիկում, որին ենթակայ է համալսարանական երեսփոխութիւնը:

Համագումարի պարագմունքները տեղիին մի շարքով, նախօրը պատրաստված «Օրակարգին» համաձայն: «Միութեան» անցած գործունէութեան մանրամասն տեղեկագրերն ծանոթանալուց յետոյ, ժողովը անցաւ դասաթիւսութիւններին և ուսանողական մարմիններին կողմից առաջադրված հարցերի ընդունութեան: Վերջին նիստերը նուիրվեցին առաջիկայ տարվայ գործունէութեան ծրագրի ընդունութեան, պատրաստված Լիազոր Կոմիտէի կողմից:

Դրա գլխաւոր կէտերը հետեւեալներն են՝ 1) Պրօպագանդ եւրոպական մամուլի մէջ: Հայ ուսանողները, ծանօթ եւրոպական լեզուներին, ունեն բոլոր յարմարութիւնները՝ իբրանց ապրած բաղադրներով յարաբերութեան մէջ մասնաւոր մասնաւոր օրգանների հետ

և տեղեկ պահելու հասարակաց կարծիքը հայկական կեանքի ընթացիկ դէպքերին և նորութիւններին: Լրագրողները խմբագրութիւնները, ինչպէս ցոյց են տուել եղած փորձերը, սիրով են ընդունում այս աշխատակցութիւնը, և հետեւաբար նրա արդիւնաւորութիւնը անկասկածելի է:

Բ) Բրօքինգեր հայեցակից լեզուով: Նկատելով քաղաքական և ընկերակցական բրօքինգերի անագին պահանջը մեր ժողովրդի կողմից, Համագումարը որոշեց՝ առաջիկայ տարին կրկնակի ուղարկութիւն դարձնել դրա վրա: Մինչև այժմ «Միութիւնը» հրատարակել է գրքոյկներ՝ աւելի քան 50 հազար օրինակ: Եթէ 250—300 հայ ուսանողների դէմք մի անշահ մասը, օրինակ՝ 50 հոգի, մի-մի բրօքինգ տան, թարգմանական կամ ինքնուրոյն, մենք կարող կը լինեք տարվայ ընթացքում հայ ժողովրդին տալ ընթերցանութեան բաւական նիւթ:

Գ) Բրօքինգեր եւրոպական լեզուներով: Այդ բանախոսներով այն խոշոր դերը, որ կատարում են հրատարակած բրօքինգները, (մինչև այժմ տպագրված է աւելի քան 25 հազար օրինակ ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով), որոշվեց շարունակել դրանց հրատարակութիւնը: Այս տարի պիտի տպագրվեն գրքոյկներ իտալերէն ու անգլերէն լեզուներով ևս: Բացի դրանից պիտի հրատարակվի և մի յատուկ գրքոյկ՝ ռուսերէն լեզուով:

Դ) Հրապարակային դասաթիւսութիւններ: Շարունակել կազմակերպել դասաթիւս երկրների կենտրոնական բաղադրներում հրատարակային կ'օն ֆերանսներ և միտինգներ նուիրված մեր վիճակին: Դասաթիւսները պիտի լինեն հեղինակաւոր եւրոպացիներ, ծանօթ հայկական դատին: Անցեալ տարիները Գերմանիայում, Շվեյցարիայում և Ֆրանսիայում կազմակերպված դասաթիւսութիւնները նուիրված էին գլխաւորապէս թիւրքահայերի դատին:

Ե) Մեծ Ժողովածու: Համագումարը՝ կրկին անգամ ընդունելով դրա հրատարակութեան կարեւորութիւնը, որովհետ նախորդ կոնգրէսի կողմից, յանձնարարեց ըստ կարելոյն շուտ պատրաստել և լոյս ընծայել «Մեծ-Ժողովածուն»:

Զ) Գաւազներ: Ուղարկութեան առնելով այն բացառիկ ընդունելութիւնը, որ գտաւ «Հայաստանի քարտէզը» հայ հարաբերութեան բոլոր շրջաններում, համագումարը վաւերացրեց առաջարկը՝ պատրաստել հայ աշխարհի բոլոր նահանգների առանձին-առանձին մասնաւոր քարտէզները՝ լատիններէն տառերով, թէ «Մեծ-Ժողովածուի» մէջ գեանդիւր, թէ՛ դրանից անկախ տարածելու համար: Մինչև այժմ արդէն լոյս են տեսել «Առաջատարական» և «Աստուծոյ» Պատրաստվում է «Կրկնական»: Նախագծած շարքի մէջ պէտք է մտնեն Հայաստանի վեց նահանգները և Անդրկովկասը:

Նախաձեռն: Նախագծած ձեռնարկների իրականացման համար, Համագումարը կազմեց 25,000 ֆրանկի տարեկան նախաճաշիւ: Այդ գումարից գանձարանի մէջ կայ այժմ մօտ տասն հազար ֆրանկ: Գանձարանի վրա յատկապէս «Մեծ Ժողովածուի» տպագրութեան համար: Մնացած 15,000 ֆրանկը պիտի հաւաքվի այս տարի, որի համար պահանջվում է թէ Կոմիտէի և թէ ուսանողական մարմինների եռանդուն գործակցութիւնը:

Լիազոր Կոմիտէ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐ

—Պարիզից մեկ գրված մի նամակից քաղուած ենք հետեւեալ կտորը. «Վերջին կայսրը վերջերս մի նոր թատերական հարուած խաղաց, որի քողարկեալ նպատակն է դարձնել գրգռել Ֆրանսիան: Նա պարզապէս ոտնակոխ անելով իր պապի և Բիսմարկի քաղաքականութիւնը, Բիսմարկի, որ գուցէ «մենք չենք գնալ Գանսուս», դաւաճանելով «Kultur Kampf»-ին, վեր կացաւ և ուղղակի «Կանսուս» գնաց: Ամբողջ քաղաքական աշխարհը մի առաւել ապշութեամբ իմացաւ, որ Պիոս X պապը պարգևեց Վերջին կայսրին Ս. Գերբեզմանի կարգի մեծ շքանշանը և կայսրը որոշել է հանդիսաւոր արարողութեամբ ընդունել պապական այդ պարգևը և դրա համար հրաւիրել է Կեօն քաղաքը Գերմանիայի գրեթէ բոլոր կաթոլիկ եպիսկոպոսներին: Պէտք է իմանալ հասկանալու համար քաղաքական աշխարհի ապշութիւնը, որ Ս. Գերբեզմանի շքանշանը իսկապէս մի ընդունված շքանշան է, այդ շքանշանը սահմանել է Երուսաղէմի կաթոլիկ պատրիարքը և տալիս է ամեն մի անձին, ով որոշ գրամատկան նուրբ է անում պատրիարքարանին: Մինչև այսօր ոչ մի թագաւոր, ոչ մի աշխի ընկնող կամ յայտնի գործիչ

և գիտնական հետամուտ չէ եղել ձեռք բերել այդ շքանշանը, պարզապէս այն պատճառով, որ նա տրվում է ամեն մի ուսանողին, որ մի կտրիկ գումար նուիրում է Երուսաղէմի կաթոլիկ պատրիարքին: Եւ յանկարծ Գերմանիայի հզոր կայսրը հետամուտ է լինում ստանալու այդ շքանշանը, որովհետեւ յայտնի է, որ նա ինքն է խնդրել պապին պարգևել իրան այդ շքանշանը: Տարակոյս չը կայ, որ Պիոս X պապը շտապեց օգուտ քաղել Վերջին կայսրի առաջարկութիւնից և մի մեծ ցոյց անել Ֆրանսիայի դէմ, սպառնալու համար, որ կաթոլիկները պաշտպանութեան իրաւունքը Արեւելքում կարող է յանձնվել գերմանական կայսրին և Ֆրանսիան կը գրկվի այդ իրաւունքից: Եւ իսկապէս, Վերջին կայսրական էլ այդ է, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ Ֆրանսիայի և Վատիկանի յարաբերութիւնները այժմ խզված են եկեղեցու և պատմութեան բաժանման օրինագծի պատճառով, Վերջին կայսրական է իր ձեռքը ձգել Արեւելքի միջնաւոր կաթոլիկների պաշտպանութեան իրաւունքը և դրանով գերազդիտ ազդեցութիւն ձեռք բերել ամբողջ Արեւելքում: Եւ անհրաժեշտով Գերմանիայի Ս. Գերբեզմանի կարգի առաջին ասպետ, օրհնութեամբ պապին, նա մի տեսակ նուիրական անձն է դառնում կաթոլիկներ համար Արեւելքում: Արդէն տրուածական գերազդեցութիւն ձեռք բերած լինելով Փոքր-Ասիայում, նա ձեռք կը բերէ և հոգևոր բարոյական գերազդեցութիւն: Վատիկանի և դրանով կամենում է իր վրէժը լուծել Ֆրանսիայից հոգևորապէս ինչպէս համար: Ֆրանսիական պարլամենտում թէև դանդաղորէր, բայց քայլ առ քայլ առաջ է տանվում Երեւելքում և Պատմութեան բաժանման օրինագիծը, որի դեմ 10 յօդուածներն են ընդունվել մինչև այժմ: Այդ օրենագիծ մասին մի թիւ յետոյ կը խօսենք:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

16 յունիսի

ԳՈՒՆԶՈՒՄԻՆ, 15 յունիսի: Պատերազմական գործողութիւնները դանդաղում են: Այստեղ եղանակը լաւ է: Անձրեւներ յաճախակի են, բայց նրանց շրջանը չէ սկսվել: Ծանապարհներն արագ չորանում են: Բանակներում փոփոխութիւններ չը կան:

ԵՒՐԱՅՈՎ, 16 յունիսի: Նահանգական զեմստովի ուղարկելու նախագիծ իշխան Գոլիցինը զեկուցում արեց փետրվարի 18-ի Բարձրագոյն ընկերակցութեան անթիւ: Նա մշակել է նախագիծ ժողովրդական ներկայացուցչութեան ընդհանուր, հաւասար, երկաստիճան, գաղտնի ձայնաւորութեան հիման վրա, առանց ազգութիւնների և դաւանանքների սահմանափակելու: Այսօր նշանակված է նախագիծը ընդունելու: Նախագիծը ընթերցումը առաջացրեց ձայնաւորների և հասարակութեան ծախսաւորութիւն:

ՄՕՄԻ, 15 յունիսի: Գերմանիայի Լինեվիչի կարծիքով, Կուրօպատկինի պաշտպանութեան գիծը անբաւարար էր, այդ պատճառով ինքն այժմ իր պաշտպանութեան գիծը երկարացրել է անագին չափով, որը երկուսն է չափազանց համեմատելով իր ունեցած անշահ քանակութեան զօրքերի հետ: Առաջապահները շատ առաջ են անցել դէպի հարաւ: Առաջին թիւաց գիծը միշտ չիման մէջ է ետազմական առաջատար գծերի հետ:

ԲԵԼՈՍՏՈՎ, 16 յունիսի: Գործարանատէր Մորէյի սպանութիւնը յուզում է ամբողջ քաղաքը: Բանակներին մէջ զօրեղ ազդեցութիւն կայ արմատախիլ անելու խուլիգաններին և անիշխանականներին:

ՎԻԼՆԱ, 16 յունիսի: Այնքանգրեան բուլվարում երէկ մի անյայտ չարամիտ սպանեց գործողութիւն, մի ուրիշ գործողութիւն վերաւորվեց, վերաւորված է և մի անցորդ: Մի չարամիտ բռնված է, միւսներին գտնելու համար եռանդուն միջոցներ են ձեռք առնված:

ՊԵՆԱՆԳ, 16 յունիսի: Զինական գլխաւոր վաճառականները վճռեցին արգելք դնել ամերիկական ապրանքներին վրա, քանի դեռ Միացեալ Նահանգները չեն սահմանափակել չինացիներին մուտքը Ամերիկա արգելող օրէնքը: ՆիՊՈԼԱՆԿ, 15 յունիսի: Մայր տաճարի չիւրոցում ուղիք նետվեց այն ժամանակ, երբ ուսերկանայեան Իվանովը կաղանկների հետ միասին մօտենում էր ամբարներին: Վաւարեցին 4 հոգի: Ռուսները նստեց բանուր Սաֆոնովը, որը ձերբակալված է:

ՊԱՐԻՅԻ, 12 յունիսի: Այսօր ցերեկվայ ժամ 5 և 33 րոպէին զօրեղ երկրաշարժ եղաւ, որը տեղեց 40 րոպէ. տեղի ունեցաւ ստորերկրեայ որոտ:

17 յունիսի

ՎԱՐՇԱՎԱ, 16 յունիսի: Գործադուլի հարցը վճռեցին բանակների գաղտնի բուժարկուներին: 850 բանակներ 47-ը գործադուլի

կողմնակից էին: Ագիտատորների մտադրած ընդհանուր գործադուլը յունիսի 13-ին չը կայացաւ բանակների մեծ մասի դիմադրութեան շնորհով:

ԿՈՎՆԱ, 16 յունիսի: Երէկ եղբ. Շմիդտները մետաղէ գործաւորների բանուրները—1000 հոգի, կրկին գործադուլ արին—Գործադուլ են արել մասնաձառները: Դադարում միտ չը կայ:

ՐԵՍԻՆԱ, 16 յունիսի: Բանիւնբուրգի գաւառի մի քանի գերեզմանում նորից խուլիգանութիւններ տեղի ունեցան: Փոխ-նահանգապետը գնաց այնտեղ: Ուղարկված է 2 վաշտ զինուոր:

ՕԴԵՍՍԱ: Հրատարակված է քաղաքապետի երկրորդ յայտարարութիւն. «Ենդրում եմ Օդեսայի ընտանիքներին, աչքի առաջ ունենալով աղմկալի դրութիւնը, չը հաւաքվել փողոցներում և չը միանալ ամբարների հետ խուսափելու դժբաղդ դէպքերից, որ կարող են առաջանալ զօրքերի հրաձգութիւնից: Նեյդգարդ»:

ԼՈՆԴՈՆ, 16 յունիսի: «Տերեկ» կրէյսերը ջրատույզ է արել դանիական «Պրինցէսսա Մաւրա» շոգենաւը:

ՊԵՏԵՐԲՈՒԴ, 16 յունիսի: Սեվաստոպոլ մեկնեց սեւ-ծովեան նաւատորմի և նաւահանգիստների գլխաւոր հրամանատար փոխ-ծովապետ Չուխինը:

ՊԵՏԵՐԲՈՒԴ, 16 յունիսի: Օդեսայի և իր գաւառը պատերազմական դրութեան մէջ են յայտարարված: «Российское Слово» լրագրին յայտարարված է առաջին նախազգուշացում: —Մամուլի գործերի գլխաւոր վարչութիւնը յայտարարում է, որ Վաշինգտոնից յունիսի 10-ին հաղորդած լուրը խաղաղութեան բանալիցութիւնների դադարման մասին հնարովի է: Բանակցութիւններն ընթանում են առանց ընդմիջման, և Միացեալ Նահանգների կառավարութեան ոչ մի դիմում չէ մնացել առանց պատասխանի Ռուսաստանի կողմից:

ԼՈՆԴՈՆ, 16 յունիսի: Երուսաղէ թագաւորը շնորհեց Արքեպիսկոպոս պրինցին Բաղանիսի օրդէնի մեծ խաչը: Պրինց Արքեպիսկոպոս յունիսի 21-ին ջուրը կրկնեց ետազմական կրէյսերը:

ՄՕՄԻ, 15 յունիսի: Մինչև այժմ ուսանողներ հիւսիսային Կորէայում միայն թոյլ դիմադրութիւն էին ցոյց տալիս ետազմացիներին, նահանջելով դէպի Տաւէն գետը: Ռուսները գտնվում են Տաւէնի ձախ ափին: Նրանք նահանջել են երկու ճանապարհով:

ՏՈՒՐՈ, 16 յունիսի: Երուսաղէ թագաւորը շուրջ 7 մղոն տող ջրերը լիքն են անկաններով: Նաւահանգստի բերանը ուսական լճովին սաստիկ ամրացրած է: Վաղելիստօկում կայ ընդամենը 1000 թաղանթ, բոլորն էլ խիտ ճարպիկութեամբ պատապարված: Բերդապահները ընդհանուր թիւն է 50,000 հոգի: Նախագիծ են, որ ուսանողներ եռանդուն դիմադրութիւն ցոյց կը տան: —Բանակի ճակատից եկած զեկուցումների համաձայն, Լինեվիչի զօրքերի վաւ վրձակի մասին լուրերը անհաւանական են: Նրա բոլոր պատրաստութիւններն ընց ցոյց են տալիս, որ ուղում է ետազմացիներին վճռական ճակատամարտ տալ: Լինեվիչը շատ է օգտվում Մրջնիսկոյի հեծեալազօրքից: Խղճակցի հաղորդածը, թէ Լինեվիչը շրջապատված է ամբողջովին ուղիղ չը դուրս եկաւ, սակայն Լինեվիչի դրութիւնը անկասկած շատ լուրջ է:

ԽՄԵՐԵՐ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ

Հրատարակչները՝ ԹԱԻՌԻԶԻ ՏԻԻՐԱՆՆԱՆ

ԻՍԱԿԱՅ ՄԵՐԻԲԱՆԱՆԱՆ

ԲԱՑԱՆԱԿԱՆ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով. իսկ Թիֆլիսին 58 րոպէ կամ մի ժամ աւելի ուշ պէտք է հաշուել):

	Պետ.	Մար.	Արագ.	Ապր.
Բագուից դուրս գալը	4.33	12.38	1.18	5.10
Թիֆլիս հասնելը	10.43 առ.	5.51	2.22	11.18
Թիֆլիսից դուրս գալը	11.28	6.39	10...	6.50
(Թիֆլիսի ժամանակով)	12.26	7.37	10.58	7.48
Բաթում հասնելը	12.31	7.8	8.16	12.42
Բաթումից դուրս գալը	5.55	10.9	9.33	
Թիֆլիս հասնելը	6.29	10.33	7.39	
Թիֆլիսից դուրս գալը	7.29	11.13	4.59	
(Թիֆլիսի ժամանակով)	8.27	12.11	5.57	
Բագու հասնելը	1.—	4.59	5.46	
Երևանից դուրս գալը	12.25		9.40	
Կարսից »	4.12		1.17	
Ալեքսանդրօպոլ »	7.50		5.26	
Թիֆլիս հասնելը »	5.24 առ.		3.28	
Թիֆլիսից դուրս գալը	11.50 գիշ.		2.50	
(Թիֆլիսի ժամանակով)	42.48 գիշ.		3.48 ց.	

